

## ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստան աշխարհքը շատ վախտ էր նեղության, ավերման տակ ընկել, ամա էս ամենիցը անց կացավ: Սար ու ծոր դառել էր գողի, ավազակի թևակարան: Ամեն կողմից Պարսիկք էնակն ոտք բարձրացրին հանկարծ, որ էլ դեմ կենալու ճար չկար:

\*  
\* \*

Ո՞վ չգիտի, որ էս հաղաղին, ինչ ժամանակ Հասան-խանը արևմտից, Արաս-Միրգեան արևելքից՝ ավազակի պես հանկարծ էկան, մեր սահմանը (սուր) կոյսեցին, մեր կողմը ամենին խարար չունեին: Ընշանք Ռուսք իրանց զորքը կիսաքենին, Ղզլրաշը կարող էր սաղ Վրաստան ոտի տակ տա, եթե Հայք չէին ամեն տեղ նրա ճամփեն կորել: Միայն Ներսես ու Գրիգոր եպիսկոպոսաց, Մատաթովի ու Բեհրուրովի արածր բավական է, որ աշխարք իմանա, թե ի՞նչ հոգի ուներ էն ժամանակը մեր ազգը: Առաջինը՝ խաչը ձեռին՝ Հայոց քարոզում, զորք էր հավաքում, որ գնան, արին վեր ածեն իրանց ազգի համար. Երկրորդը՝ Երմալովի խնդրովը եպիսկոպոսության շորերը փոխած, չերքեզի շոր հագած, յարաղ, ասպար կապած, որ Թիֆլիզու Ղազախ, Բոռչալվի միջովը չէր անց կենում, ինչն իմանում էր խալիք՝ թե իրանց փրկիչն էր գալիս:

\*  
\* \*

Երևան թէին տվեց, եթե Ռուսաց զորքը իր մեջը մտան: Էջմիածնի խնկի, մոմի հոտը ու

զանգակների ձեմը երկինքը հասավ: Քաջահայթ հակայն, կոմսն Երևանի, Տորիթան իրեշտակ Ներսես արքեպիսկոպոսի ձեղիցը բռնած մոտավ Վաղարշապատ, որ Եփրեմ կաթողիկոսի սուրբ աչքին լիս տա ու առողջություն: Էն ժամանակվան խաղերը որ հանել ասում էին, հավիտյան հավիտենից կարող են աշխարքին վկայություն տալ՝ թե Թուրքը ու Հայ հենց իմացան թե Աստված վեր էկավ իրանց համար:

\*

\*

Սրբազն Ներսեսի խաչին դուրբան գնամ, Հոգևոր Եփրեմի տիրոջն դուլ դառնամ, Սուրբ Գեղարդն մեռոնի զորքն մարտն էկան. Թշնամին քոռացավ. Հայքն որախացան. Հայ ազգի աղոյթը երկինքը հասան: Անաստաված՝ Հայից ձեռք քաշի՝, կորի: Անիրավ՝ Հայերի արինն մի՛ խմի. միտք արա՛ և այլն:

\*

\*

Կարելի է՝ աշխարհք աշխարհով դիպչի, ազգեր գան ու էլ եղ ոչնշանան, բայց բանի որ Հայի շոնչն ու լեզուն՝ կա, ե՞րբ նրանց մտքիցը կերթա էն ավելացից սիալը, որ իշխանն Վարշավի, գեներալն Գրասովսկի մեր անման Ներսեսին հետըները՝ խաչ ա-

վետարան ձեռին՝ մոտան բերդը, որ Հայոց աշխարհի ազատության տոնը կատարեն:

Էս միջոցին էր՝ որ Ներսես սրբազանը Սահմակ աղի ձեռիցը բռնած՝ ընկել էր բրդի, բաղաների գլուխն ու հենց գիտեր՝ թէ երկնքիցն ա Երևանու դաշտին մտիկ տալիս. նոր ըլի դրախտը նրա աշքի տաշին բաց էլել. նոր ըլի շրմեղեղը դադարել, նոր ըլի որդին միածին վեր էկել, որ իր արդար, սիրելի Հայոց ազգին փրկություն բերի: Անց կացած ժամանակները երազի պես էին նրա աշքի տաշին կանգնել: Տէր իմանում թէ Երևան ա տեսածը, թէ Թիֆլիզ: Էս պուճախներումը, էն ձորերումն ու բաղերումը՝ որ սև Ղզլրաշի երևի էր նրա աշքը սվորել, մուս էր տեսնում ցրված, նատած. ո՞վ չէր տեսածը երազ համարի, յա հրաշը: Էս մտածմաց մեջը կրված՝ էն թաևձր ունիքի տակիցը իր հոգելից աշքը Զանգիսի վրա էր քցել ու մնացել վերացած, գալազանի վրա թիւնը տված, որ մեկ քաղցր ձեմ եւնիցը որ «հայ սուրբ ջան» չասաց ու ձեռն՝ առաջ դրշին, հետո երեսին չկացրեց. քաջաշան հովվակեար մնաց ուշագինաց: «Հայր սուրբ ջան՝ սրբազան տեր՝ ա՞ն, էս ի՞նչ օր ա», մեկ ձեռ էլ մուս կողմիցն էկավ ու մուս ձեռը բերան ընկավ: «Սմբառով ջան, Երուսալեմսկի ջան՝ որդիք, թաղեցե՛ք ինձ այսունուն ձեր ձեռովք, թէ որ մեկ քանի օր էլ Աստված ինձ կրանք պետք է տա, թող էնդուր համար տա, որ էս էրված սրտիս մուրազը կատարեմ, մեր խեղճ, ցրվալ ազգը՝ էլ եռ իրաց աշխարհը բերեմ: Էս մեկ քանի էլ թո՞ն էս կարու աշք տեսնի, հետո, ա՞ն՝ հետո Հայաստանի սուրբ հոյի տակը մտնիս: Խնդրեցե՛ք, խնդացե՛ք, իշնդացե՛ք, խնդրեցե՛ք՝ ո՞րիք չան, որ ձեր ծերունի նոր էս մեկ խնդիրն էլ Աստված լիի, էլ որիշ քան չեմ ուզում: Հայաստան, Հայաստան՝ տո՛ր ինձ քո սիրտը, տո՛ր ինձ գերեզման, էլ որ նոր ազգեր թէ գան ու երան, ա՞ն չի մոտանան քո սև դառն օրիվան նեղությունն, տաճանքն, կա՛ց ու զգաստացի՞ն, քո խեղճ որդոցը սիրով պահպանիր, էլ քո զավակը գերի մի՛ քցիր, սուրբ հոյոյ իմ երես՝ ընտի՛ր Հայաստան, աթոռ Աստուծո՛ տուն Արշակունյան»:

..Ներսեսի հոչակն օրեցօր մեծանում էր և համբավ էր ատանում նաև օստար տերությանց աշբում: Այդպէս ամա 1811 թիվ

վերջերին նա պահակե խաչ ստացավ Ռուսիոն կապրից. իսկ եռ աթոռային կապված ների վերաբերությամբ հրովարտակներ ստեղու համար 1812 թվին նա գնաց Թավրիզ Արքաս-Միրզայի մոտ, հանդիսավոր ընդունելություն ստացավ և քանի մի ամսականց հետո հաջողությամբ վերադարձավ Էջմիածին: Ներսեսի խաղացած ներև արքի էր զարկում ամենքին: Օրինակ, անդիմացի կրոնավոր Հենրի Մարտինը, որ 1812 թվի սեպտեմբերին հյուր էր եղել Էջմիածնուն, գործ է այդ մասին՝ «Մենաստան այս կառ լավ և ասել՝ ընդհանուր ազգ Հայոց են ընը իշխանութեամբ Ներսեսի՝ միոյ խարքայի կալուգուան անոնի, քանի պատրիարքի եփրեմ է անուանակիր նեթ, և ի քազում եղանակ տարուց յանողնի հիւսնդութեան, տեսանի և այն»:

Մինդական կառավարությունը ձեռքի առնելու օրից, դեռ Դամիելի ժամանակ, Ներսեսն աշխատում էր վերականգնել Էջմիածնի վանքում Միմեռն կաթողիկոսի շինած ժառանգավորաց դպրոցը: Այս մասին Արքաս-Միրզայի հաճությունն էլ առնելով, նա սկսեց շրջակա գյուղերից երեխայր ժողովել ուսուցանելու համար, բայց շարունակվող ուսու-պարսկական պատրեազմք և երկիր անապահով դրույնունը, մեծանման արգելքներ հառաջ բերելով, հետաձգելու վիճին Ներսեսի ցանկության իրագործումն մինչև 1813 թվականը, երբ, վերջապես, փոքր-ինչ ազատ շոնչ քաշելով, կարողացավ նա կառուցանել յոր մտադրյալ դպրոցի շինությունը:

Ներսեսը, ընդհակառակն, պնդում էր, թէ որովհետև «Էջմիածին է տեղին հաստատեալ՝ իմանեալ և սրբեալ յերկնուաս քառ տեղեան Արքոյն Գրիգորի Կուսառորչի և է Արոռ Շորա», վասնոր կվալել, որ ազգի մեջ լուսը այստեղից տարածվի և ոչ թէ արտաքուստ գա:


Ներսեսը շինեց Էջմիածնում 50 ժառանգավորաց դպրոց: Ներսեսը ինքն էլ շոտով համոզվեց, որ Էջմիածնի դպրոցը միակնակ չէ կարող բավականություն տալ ընդհանուր Հայոց ազգին. հետևաբար կարեոր էր որ թեմերումն էլ ուսումնարաններ բացվին:

Երաց այդ դրության մեջ նայ հոգեկորականությունը տգետ էր, ըմբռատ, անպատ-

կառ, ոչ յուր կարգը և ոչ պատիվը ճանաչող: Ենեղեցիքը թալանված, ազգային եկամուտները հափշտակված:

Ազնվականը և իշխանականը—անուսք, գոռոզք յուրյանց ցեղական ծագմամբ, բայց

լի, ապա օգնության կհասնեն Ռուսաստանի, Տաճկաստանի ու Հնդկաստանի հայք, որուաց տերությունը ևս չի զլանալ մի նշանավոր գումար տալու հօգուտ ժողովրդական լուսավորության ձեռնարկած գործին, և այդ-



Թիֆլիսի հայոց Ներսիսյան հոգևոր դպրոցը

զագրեխի վարք ու բարքի տեր, կեղեքիչը և հարստահարիչը ուսմիկների ու տկարների:

Ժողովուրդն ընկղումած խավարի մեջ, բարոյակես ընկած, օտարամոլության հակված, խոճանի և ցավարի դրության մեջ:

Այսպիսի դրությամբ տեսավ Ներսեսը յուրյան համեձնված Վրաստանի թեմը, որ այն ժամանակն էլ արդեն բավական ընդարձակ էր և Գանձակից մինչև Սև ծովն էր տարածված:

\* \* \*

Մնում էր հուսալ հասարակության համակրության վրա, և այդ էլ փորձեց: Ներսեսի մտքի մեջ կազմած նախագծով՝ ուսումնարանի շինությունը կառուցանելու համար հարկավոր էր առնվազն երեսուն հազար ոուրիշ: Վրաստանի թեմում, մտածում էր նա, որու 12 հազար հայ ծովս կա. եթե դրցա կեսը, որպես ունենոր, միանվագ մի-մի ոուրիշ վճարե, կգումարվի վեց հազար ոուր-

պիսով ուսումնարանը կկառուցվի: Ահա՝ այս մոքեքը արհին անդադար կրկնում է յուր բազմաթիվ համակագրությանց մեջ 1814 և 1815 թվականներում:

\* \* \*

Եվ այդպես, ուսման արժեքը գնահատող Ներսեսը անձամբ ևս կամեցավ օրինակ ցուց տալ՝ առվործով ուսուերեն գիրն և լեզուն, որոց մեջ շարունակում էր ևս կատարելագործվիլ նույնիսկ յուր կաթողիկոսության օրերում: Հայտնի է, որ ապա փոխարքա իշխ. Վորոնցովի տանը ծերունի Հայրապետը ժամերով խոսակցում էր ուս տիկնան հետ առանց թարգմանի:

\* \* \*

Աշտարակեցի Ներսեսի մոքումը հղացած ուսումնարանի համար կարևոր էր մի հոյակապ և մեծածախ շինություն, որի մեջ երազում էր նա մողովել մոտ 800 ուսանող:

Հարկավոր էր նմանապես ապահովացնել, այդ ուսումնարանը հաստատ եկամուտներով: Սակայն այդ բոլորի համար պետք եղած դրամն զումարելը գուցե այնքան դժվարություն չէր ներկայացնում Ներսեսի համար, որքան մտառանշություն էր պատճառում նորան ընտիր ու համբավավոր ուսուցիչներ գտնելու խնդիրը: Նա լավ գիտեր որ մի ուսումնարան հոչակ կարող է վայելել ոչ այնքան շինության ճնշությամբ, որքան բանիքում վարժապետների անունով: Խոկ այն ժամանակներում Հայոց աշխարհում համբավավոր ուսուցիչների տու էր:

\* \* \*

Ներսեսը, ընդհակառակն, յոր ապագա դպրոցի համար որոնում էր ուսուցիչներ բուն հայ հոգիով, մայրենի եկեղեցիովն հարազատ և հավատարիմ ու առաքինի բարոց և վարուց տեր: Նա ուսուցի այս հատկությունները բարձր էր դասում, քանի արեւատական գիտությունները: Եվ ահա՝ այսպիսի պահանջներով արին դիմեց յոր բարեկամաց օգնության՝ ի Պոլիս, Զմյունիա, Մոլդավիա, Հնդկաստան և այլն:

\* \* \*

Եթե ուսումնարանն արդեն բացվել էր և 1826 թվին հանդիսավոր հրապարակական հարցարձնությունն էր կատարվում ներկայությամբ օտարազգի և մեր ազգի պատվավոր հասարակության, մինք հյուրերից՝ Ներսեսի վայելմի բարեկամ վրացազգի հշանավոր իշխան գեներալ Օթար Ամիլհամիանը, ոգերդված աշակերտաց ցուց տված հասուչափինությունից, մոտեցավ ալեգարդ Արքիվոյն և զգացված սրտով ասաց՝ «Դու իմ հայրենիքում մեծ լավուեր վասեգիր, լածու ու տեսած պարտավորությունն են դժուս վրաս խնդրել՝ ընդունել ինձանից Սողանիում գրողում գտնվող բարեկից ազգու ի մշտական վայելումն ըստ ուսումնարանի»: Քանի մի օրվանից հետո վրացազգի վեհանձն իշխանի Թիֆլիզից ոչ հեռու գտնվող Սողանումի ընդարձակ այգին, Կուր գետի յոր մեջական թևով և մի պատվական առյուրով, կանոնավորապես հաստատվեց և անցավ ուսումնարանի վարչության ձեռքը:

\* \* \*

Ներսեսի ցանկությունն էր յոր մտածած ուսումնարանին կից ունենալ և մի տպարան ու նման Վեհանտիկի Միթթարյանց՝ ճնշացնել մար գրականությունը նորանոր տպագրություններով: Այդպեսով թե՛ ուսուցչական հյուսվածքները և թե՛ հառաջապահ աշակերտները:

Միջոց կունենային բրյունց գիտնական աշխատությունները հրապարակ հանել ու անցն վաստակել:

\* \* \*

Ներսեսի այս մտադրությանց հետ ի մոտ ծանութ էր և համակարգիք Վանից Թիֆլիզ վերաբնակված համբավավոր Գևորգ աղա Արծրունին, որ արևին մտերիմ բարեկամներից մեկն էր: Դեռ 1816 թվին, երբ Ներսեսը նոր ձեռնարկած էր յոր մտադրյալ ուսումնարանի շինությանը, Արծրունին առաջարկանու գործերով գնաց արտասահման: Պատեղով Եվրոպայի զանազան քաղաքները, նա իմացավ որ Ամստերդամում Հայոց եկեղեցին շինությունների մեջ կողմական-պահիված է դեռ անցյալ դարերու բանող Ռուսանի և Վանանդեցին հայ տպարանը յոր բոլոր պարագաներով:

\* \* \*

Եվ ահա, Գեորգ Արծրունին գենեց Հայոց այդ բազմադարյան հին տպարանը և բերեց Թիֆլիզ Ներսեսին ընձաւ:

\* \* \*

Բավական մնալով ուսումնարանի և տպարանի հենց սկզբուն ցուց տված հասուածիմությունից և տեսնելով վարժապետաց ջանքը, ուսանողաց աշխատավիրությունը և հասարակության ոգևորությունն ու համակրությունը, Ներսեսի մեջ միտք հայացավ շտապիլ՝ դարձնել յոր հիմնարկությունը մի տեսակ Վեհանտիկան և Ղազարո Վանիք և բարի հախանձով մրցել Միթթարյանց հետ գրականական ասպարհություն: Այս դիտավորությունով Արին կամեցավ որ յոր ուսումնարանի ձեռորով հրատարակի մի զիտնական եռամսյա թերթ «Տարեգրություն Հայոց գրագիտական» անունով, այն զանազանությամբ Միթթարյանց 1800—1802 թվականների տպած հոյն անոն «Տարեգրություններից», որ ամենին չափած խոսեր բաղաքական և առօրյա անցքերի մասին, այլ գուտ գիտնական բովանդակություն ունենար:

(Աղջքանդր Դ. Երիցեան, Պատմութին 75-ամեայ գոյութեան Ներսեսին Հայոց նովուր դպրոցի՝ ի Թիֆլիզ, Թիֆլիզ, 1898, էջ 9, 24, 27, 27, 31, 33 37 37, 39, 61 118, 118, 119, 131):

\* \* \*

Հրատարակելով այս ոգևորիչ ազգափակական շրջաբերականը, Վրեմինդրությամբ

այրվող Ներսեսը, պատերազմի պաշտոնական հրովարտակից հինգ շաբաթ առաջ, արդեն յուր կողմից բացարձակ պատերազմ հայտնեց պարսից և մեկ ձեռքին խաչ, մյուս ձեռքին դրոշակ՝ հանդես դրու եկավ ազգի և կրոնի թշնամյաց դեմ: Այսօրվանից վարդապետական համեստ վեղարի տակ Աշտարակեցին հանդիսացավ որպես քաջ զինվոր և հմուտ զորապետ, ու այդպես մնաց նա մինչև պատերազմի վերջը, միշտ դեկավար և աշակից լինելով, ոուսաց զորքերին և սարսափ ճգելով պարսից բանակի վրա:

\* \*

Կոմս Դիբիչը անձամբ հանձնելով Ներսեսին այդ հրովարտակը, գրեց կայսեր՝ «Հայոց արքեպիսկոպոս Ներսեսը ընդունեց Բարձրագույն հրովարտակը ամենախորին շնորհակալությամբ: Հրովարտակը կարդացվի եկեղեցներում և կրտարակվի հայերեն լեզվով: Նա (Ներսեսը) երաշխավոր է լինում հայոց ազգի հավատարմության և շերմեռանդության մասին և նույն ունեն, որ եթե հաջողությամբ մտնենք Երևանի խանությունը, այնտեղի հայերի մոտ դեռ բավականացափ պաշար կգտնենք, որի մասին են Էլ հավատացած եմ»:

Ներսեսը ստանալով հրովարտակը, անմիջապես տպագրել տվյալ յուր տպարանում առանձին տետրակով, որ կրում էր Վերնագիր՝ «Հոչակ ողորմութեան Ներսեակալի և Կայսեր ամենայն Ռուսաց Նիկողայոսի Առաջնոյ առ ազգու Հայոց որ ի Վրաստան» և հազարավոր օրինակներ ձրի բաժանեց հայոց: Տետրակի մեջ բացի հրովարտակը՝ ուստարեն լեզվով և հաներեն թարգմանությամբ, կան տպված նաև Ներսեսի ճառը, որ պիտի ասեր ինքը հրովարտակի թեթեղանության համեմատին, և մի շրաբերանական առ «պատուարժան աւագ երիանց և ժամօրինող քահանակից Հայոց ի Թիֆիս և ի Հայուապար», որի մեջ պատվիրում էր նոցա՝ «աւետարանել ամենալն ժողովրդեան Հայոց» կայսեր ալու ողորմությունը և գալ ժողովրդի նույն փետրվարի 22-ին երեկուան Վաճրի եկեղեցին, որ պիտի կատարվեր հրովարտակի հանդիսավոր ընթերցանությունը: Նշանակած օրը հանդես շատ փառավոր էր և Ներսեսը դարձակ յուր բազմաթիվ հոտին «Յնծացէք, ցնծացէք» բացականչությամբ սկսված սրտառությունը ճառով:

\* \*

Մինչ շարունակվում էր կոփվը, Ներսեսը և Էջմիածնի բոլոր միարանություններ գգեստավորված, համախմբվել էին տաճարում

ու ս. Խշման տեղի առաջ ծնկաշոք աղերսում էին Սատունուց հաղթություն ուստական գորացը: Ներսեսը բարձրացրած ուներ ձեռքին ս. Գեղարդը և աղի արտասլուկ աղոթուում էր: Մի ականատես ոուս մեղինակ գրում է՝ «Այդ արդարը մի սրտառության տեսարան էր... վանքում մնացած ծանր հիվանդ զինվորներն անգամ սողալով ներս էին մտել եկեղեցին և լույսայն, բայց չերմաշերմ, աղոթում էին»:

Երբ պատերազմը վերջացավ, կենդանի մնացած զինվորները ոժամական և աղավակած, խումբ-խումբ և անկարգ դիմեցին դեպի Էջմիածնի: Վաճրի պարապի դուները բացվեցան, հնչեցին զանգակները և միաբանությունը խաչ ու խաչվառով դիմավորեց յուր ազատիչներին: «Այս մի բուն ոուս եղայրները, ատենաքանեց գգացված սրբություն Ներսեսը, նղեցին-անցան երեսուն հազար կատաղի զորաց միջից: Այս սակավարիս գունդը անման փառաց արժանացավ և գեներալ Կրասովսկու անունը հավիտենական անշնչելի կմնա Էջմիածնի տարեգործությանց մեջ»:

(Աղեքանիդ Դ. Երիցանց, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա., Թիֆլիս, 1894 թ., էջ 237—243, 243, 271, 294):

### ՆԵՐՍԵՍԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հազիկ թե Հովհաննես Ը Կարբեցի կաթողիկոսին մահիւն լուրը տարածվեցավ, հաջորդին անուն ալ միանգամայն սկսակ կրկնալի ամենուն բերեն, հնդկական թեմերեն մինչև եկրոպական վիճակները, որ ուրեք որ հայ ծողովուրդ կգտնվեր, և այդ միաձան հայտարարությունը Ներսես Աշտարակեցիի անունը կրկներ: Ալեշափ մեծ եղած էր Ներսեսի գործունեության և արդյունավորության ազդած հմաքքը, որ Կարբեցին Աթոռ բարձրանալը իբրև անհրավություն նկատված էր, և թեպես ընդդիմության ցուցեր չեղան, սակայն բոլոր Տաճական վիճակներ անոր անուն երբեք չիշշատակեցին սուրբ պաշտամանց մեջ, և թերևս ընդդիմություն ալ երևան եկած ըլլար, եթե ոուսական պետության ազդեցությունը միտքերը չենչեր: Ներսես մեծ ազգաւեր մը հայտնակած էր Մարտ Աթոռոր հարջստահարությանց կացութեանն օրինավորության վիճակներ, և խեղճութեանն բարօրության առաջնորդելով մեծ շինարար մը հանդիսացած էր եկանմտագետ հանճարով և անխնչ աշխատանքով և օգտակար հաստատություններով. մեծ հառաջադիմական մը ճամացված էր դաստիարակության և կրթության ուսմանց և գիտությանց համար ցուցուցած ջանքով և հշանակելի արդյունքու-

վը. մեծ բարեկարգիշ մը եղած էր զեղծումներու և անկարգություններու դեմ անաշառ պարքարվը, և ամեն կողմ կարգ ու կանոնի համար գործածած ճնգերով։ Այդ առավելությանց վրա մենք կուգենք ավելցնել ին, որ թերևս շատերուն մտադրություններ վրայած, բայց մեր տեսությամբ յոր արժանավորությանց պատճեն է եղած։ Ներսես Պապեցիշեն հալածված, Կարբեցին անարգված, պետական տեսությամբ հեռացված, և իր արտրական Բեսարարին անկյունը մեռված, երբեք հերքինքը չստորնացող և ավելուրդ գանգատներով տկարամիտ ողբերու, գժմինության ձևերու, վշտացյալ անօրործության և պատշաճից զանցանության ցոյցեր շրավ, այլ զինքն ամեն հակառակություններէ բարձր պահեց, յոր արժանապատճիւթյունները պահանջանակ չառ ավելի մեծ է ձախող պատահարներու հանդեպ յոր սատիվը պահելը, բայց հաջող պարագաներու մեջ արդյունավոր ըլլալը։ Ներսես այդ մեծությունն ալ ոնեցավ, և ահա թե ինչո՞ւ ընդհանուր ազգը զայն կուգեր կաթողիկութան գահին վրա տեսնալ։ Էջմիածնա միաբանության մեջ ալ նույն զգացումը սկսած էր տիրանալ։ Կարբեցին ձևումներուն ներքն լուսության ստիպվութեր, և կացության տերը շողորորթելով իրենց հաջողություն փնտրողներ, բոլորովին փոխված էն երբ այլևս Կարբեցին չկար, և Ներսեսին անցրալը, վեհ հոգին և արդյունավոր կյանքը իր ազդեցությունը կունենար, միտքերը կգրավեր և սիրտերը կշարժեր։

\*  
\* \*

..Ներսեսը յոր կյանքին զանազան հանգըրվաններուն մեջ, Դանիելի օգնական, Դամիթ-Դանիելյան խնդրույն ժիր գործի՝ մինչև Դանիելի Սթոռ բարձրանալը, Դանիելի կաթողիկության ատեն աշխատող և հոգածու, Եփրեմի կաթողիկութանաւուն գլխավոր ձեռնոտու, և անոր պատունավարության օգնական, բայց և միանգամայն դժվարությանց հանդիպող, Տիգիսի առաջնորդ, զեղծումներու դեմ աներկյուղ մաքառող, ուս և պարսկի պատերազմներուն զինվորական գործակից Հայերը պատերազմին մասնակցության ոգևորող, Ռուսիոն պետական շահերուն հետ ազգային մասնավոր շահերը անտես չընող, և նիշտ այդ վերջի։ տեսակետով Կոմիկասի առավելեն հեռացված, և հեռավոր Բեսարարին անկյունը նետված։


(Մաղարիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, մասն երրորդ, Երևանին, 1927 թ., էջ 3765—3767, 3771—3772):

### ՆԵՐՍԵՍԻ ԱՐԺԱՆԻՔԸ

Ներսես Աշտարակեցիի անոնքն հրապարակի վրա տեսամբ առաջին անգամ յոր վարդապետին Դանիել Սուրբառեցիի հետ ջնուռնիւհա գալուն առթիվ 1796-ին, և այն թվականն հետո մինչև 1857, 61 տարի շարունակ գործունա ասպարեզին վրա մնաց ևս ամբողիան շարունակությամբ և անխոնջ ժրոյթյամբ, զի 86 տարեկան հանացացյալ և ծանրացյալ տարիներին մեջ այ կանոնավոր աշխատության վրա էր, և մինչեւ մահվան համարնեաց օրը պաշտոնական գործերով կըրադեր։ Ներսեսի գործունեությունը երկար տևողությանը հետ ալազանությանց առավելությունն ալ ունեցավ յոր մեջ, զի գրեթե չմնաց միջավայր մը որուն մեջ գործած չըլլա, նկեղեցականն մինչև զինվորականը, ուստինականն մինչև բաղադրիտականը, խաղաղականն մինչև խազմականը, պալատականն մինչև ոսմկանը, բայց ոչ մենին մեջ մինչև հետևյալ երևացավ, և ամեն տեղ դիրքին պահանջած գործիչը եղաւ, և միշտ հնարավոր հաջողությամբ ձեռնարկերուն մեջեն եղավ։ Այս բայրով բնավ հավակնություն չունինք կարծերու թե որևէ թերություն ունեցած չէ, կամ թե երբեք մեղադրանաց ենթարկված չէ։ զի գիտենք թե որչափ մեկ մը գործունեությանց մեջ կրծիդակիի, և արդյունավորությամբ կասակիի, այնչափ ավելի մախացութերու և վնասվողներու լուսանաց կենթարկիի։ Ներսես այ ունեցավ յոր հախանձուներու, և առավելոր ունեցավ իրմեւ վնասվողներու, բայց որ բուն պայքար մեջ աղիկամի գործուներու, զեղծում ընդուներու, ապօրինի վարդուներու, հանրությունը խարողներու, և օրենքի անասատողներու դեմ, որոնց ամենը ալ հարկավ իրենց ճգտուններուն և իրենց շահերուն թշնամի պիտի մկանեկն իրենց դեմ արգելք հնանու լաձը։ Բայց ասոնց ամենն ալ որիշ բան չկրցաւ բայց, բայց եթե բնավորությունը խծրձել, կերպերը մեղադրել, չափազանցություններ վերագրել, ձեռնարկները քննադատել, բայց չկրցաւ ոչ անիրավություն մը հնատառել, ոչ շահադիտական հոգի ենթարկել, և ոչ համբության բարին անձնականին զոհած բայց, նոյնապես անտեղության և զեղմանց ընդհանուր տիրապետության դեմ պայքարի մտած ըլլալով՝ չեր կրնար մեղմ միջոցներով պետք գործել, և բուն միջոցներու պետք ուներ, որոնց պետք է խոստվածի թե ճգտուններն ալ շատ

Janapātūs fig. 2:8

020



Finer 148 old (gymnophytes)

Die Straße ist eine der ersten und ältesten in der Stadt und führt vom Markt zum Schloss. Sie ist sehr breit und hat einen sehr schönen Allee aus Linden und Eichen. Die Straße ist sehr gepflegt und sauber. Es gibt auch einige alte Gebäude, die sehr schön sind. Ein Beispiel dafür ist das alte Rathaus, das aus dem 15. Jahrhundert stammt. Es hat ein sehr schönes Portal und eine tolle Fassade. Ein weiteres Beispiel ist das alte Schloss, das aus dem 17. Jahrhundert stammt. Es hat eine tolle Fassade und ein sehr schönes Innere. Die Straße ist sehr gepflegt und sauber. Es gibt auch einige alte Gebäude, die sehr schön sind. Ein Beispiel dafür ist das alte Rathaus, das aus dem 15. Jahrhundert stammt. Es hat ein sehr schönes Portal und eine tolle Fassade. Ein weiteres Beispiel ist das alte Schloss, das aus dem 17. Jahrhundert stammt. Es hat eine tolle Fassade und ein sehr schönes Innere.

57991

1828 Cork 92:  
28th Dec:

W. H. B. -  
Check

Բարմարություն ունեին, և պետք ու ընութը ձեռք-ձեռքի տալով կազմեցին Աշտարակեցին, տեսակին մեջ առանձնահատուկ անհատ մը, գործերու էռջան տեսակետեն գերազանց և գնահատելի, իսկ պարագայից կղղմեն թերևս չափազանց և քննադատելի, տական ամեն առօհ մեջ լոր ուղիղ մտադրության համաձայն, և լոր բարձր նապատակին օգտակար: Այնաւեւ որ կրնակը առանց վարանման հայտարարել, թե լոր ժամանակին ամենամեծ ազգային դեմքը հանդիսացավ, հայության համար պատրաստված իսկական օգոտտերու շարժադրիթ ճանչցվեցավ, և ազգային կյանքին դեպի լայն հեղաշրջման գլխավոր ազդակն եղավ: Այս տեսակ անձնավորություններ, երբոր իսկական արդյունքներով և իրական արժանիքներով կներկայանան, անպետք իմբրծանք կըլլա անոնց մասին մանր պարագաներու և աննշանակ հանգամանքներու դիտողությանց մոնել: Ներսեսի արտաքին երեվույթին մասին մեզի հասած կենդանագիրներ և նկարագիրներ կներկայեն զայն կաօսնվածով փոքր ոչ չոր, Մարտ Արտոն հայրապետական գահին շրջափակին մեջ ծածկելու չափ, շղուս ու շղայնու և դյուրագրդիո, անելքելի և բուռն, բայց միշտ լոր անձին և լոր կրից ու զգացնանց տեր, որուն մեծ հավաստիքը տեսնվեցավ Բեսարարի աքսորական վիճակին մեջ: Այն համբավը, զոր վայելեց լոր կենդանության տարիներուն մեջ, այն համակրական զգացումը, որով հայրապետական գահ բարձրացավ, այն ընդհանոր հոչակը զոր մահվանե ենու այ վայելեց և կվայելեն, բավական են արդարացնել մեր տեսությունները զորս անկաշկան բացատրել խիդի պարտավորություն մեպեցինք:

(Մաղարիա արքեպ. Օրմանյան, Ազգապատում, մասն III, Երևանի, 1927, էջ 3955):

\* \* \*

Էշմիածնում կրթական բարեկարգության եռանդուս կողմնակից էր Ներսես Աշտարակեցին, բայց նա էլ, 1813-ին Թիֆլիս տեղափոխվերով առաջնորդի պաշտոնով, սկսեց արտեղ ամեն ջանք գործ դնել իր ցանկացած դպրոցը հիմնելու համար: 1824-ին էր որ բացվեց Ներսիսյան դպրոցը: Եվ այսպիսով, կարճ միշոցում ստեղծվում էին երկու դպրոցական բարեկարգ հաստատություններ, բայց երկուսն էլ մայր հայրենիքի և պարսկական տիրապետության սահմաններից դուրս, գաղութներուն:

\* \* \*

Երկար պատմություն է թե ինչեր արակայ ազգաբնակությունը ուսաց զորքի հայ-

թական աջողությունների համար, ինչ ենան և որքան անձնազնություն ցոյց տրվեց նա այդ ասպարեզու: 1826—1827 թթ. ուսա-պարսկական պատերազմների տարեգրությունները լիբն են ժողովրդական շարժման հոգիչ մանրամասնություններով: Հայ-



Էշմիածնի Ներսիսյան լիճը

ազգը լավ զգում էր որ եկեղեցական վճռական բարեկան, երբ, վերջապես, պիտի շոտ զա իր պատմական բախտը, երբ նրա կյանքին մեջ պիտի սկավի նոր դարագրուի: Այդ վճռական հեղաշրջման համար հայ զգույթին, կարերի անսուս ստրուկը, չէր խնայում իր կյանքը ու գույքը:

Այդ ժամանակ ոգին Ներսես Աշտարակեցին էր, Թիֆլիսի առաջնորդը: Դժվար է ցոյց տալ մեր պատմության մեջ ամելի կրակու պրոպագանիստ, ամելի մեծ ենան և կամքի անխորտակելի ուզ: Միայն, նրա այն զրագրությունները, որոնք վերաբերվում են 1826—1827 թվականներին, այսօր էլ վկա են թե ինչ ահագին գործունեություն էր կյանել այդ իսկապես խոշոր մարդուն՝ հայ ժողովրդի իդեալները իրականացնելու համար: Պետք էր ունենալ մեծ ինքնավատառություն, մեծ հավատ դեպի գործը,

կանխատեսություն՝ քարոզելու և գործելու համար այնպես, ինչպես Ներսեսը գործուն էր այդ վերին աստիճանի կարևոր պատմական բովելին. պետք էր բախտից և իշխանությունից երես առաջ մարդ լինել ամփերապահ, համարձակ կերպով ազգերն ու ժողովուրդները հոսադրելու, հոսահատեցնելու, շարժել տալու համար: Պատմությունը այս մեծ գործունեության շատ և շատ փաստերն է պահել իր մեջ և մենք այստեղ այդ փաստը չափուի կրկնելու: Կրավալիանանքը մի երկու բնորոշ փաստերով, որ հանում ենք Ներսեսի անտիկ թղթերից:

Դեռ 1827-ի սկիզբն է, ենո ոուսաց զորքը Արարատյան երկրում նոր է երևացել և վճռական գործություններ էլ չեն սկսել: Որպեսզի հայ ազգաբնակությունը հավատով և վստահությամբ վերաբերվի ոուսական շարժման, որպեսզի ամեն տեսակ պաշար հայութեան ոուս բանակին, Ներսեսը 1827-ի ապրիլի 13-ին Էջմիածնից ողղում է մի շրջաբնական-կոչ «պատվելի հասարակության հայոց բնակեց համեման սահման Երևանու և Նախիջևանու ի քաղաք և ի գոյուս»:

Այդտեղ նա գրում էր.

«...Եւ ես որպէս հոգևորական և վկայ հավատարիմ ձեզ յԱստուածակոյս կողմանն հաւատարմացուցանեմ զամենայն զիայկագեան երամն հօսի սրբոյ Լուսաւորչին մերոյ և մեծ վկային Քրիստոսի Գրիգորի մեծի Պարթևին, զի երկիր Երևանու և Նախիջևանու յայսմիետէ այնպէս է յատկացեալ պետութեան ոուսաց, որպէս Թիֆլիզ, Ելիգավակթապօլ, Աստրախան և այլ ամենայն լայնածառալ սահմանաց նորին գաւառը և նահանգը և զօրք նորա չունեն վերադաշնապ ըստ առաջնոյ, այլ կամ և կալոց են յախտեան ի հովանաւորթին հայրենեաց Հայաստանի և ի ափովան նեղեալ և վշտացեալ ժառանգաւորաց նորին որդուց Արամայ»:

Ներսեսը ոեալ քաղաքականության մարդ էր, մի գործիչ, որ իր երկար կյանքի ընթացքում անցել էր, ինչպես ավում է, «կրակի և ջրի միջով» և որի սրտին, ըստ երեկություն, խորթ պիտի լինենին սանտիմենտալ զերուները: Սակայն երբ Արարատյան երկրի վրա ծագեց նոր արշալուսար, երբ դարերով այդտեղ հյութաքամ եղած ժողովրդի ակնկալությունները իրականանալու վրա էին, երբ ոուսական թնդանութները սկսեցին ծեծել թաթարական բռնակալության համար:

թյան կողերը, Ներսեսի պես երկալքն մարդն էլ չշիմացավ և ենթարկվեց ժողովրդական ընդհանուր տրամադրության, հոգվեց մինչև սրտի խորքը: «Գտնվելով 1827-ի պատերազմի մեջ պարսիկների դեմ ես, երբ մեր զորքերն անցնում էին Աշտարակ գյուղով, որ իմ հայրենիքն է, Բրավիրեցի հայտնի գեներալ Կրասովսկուն մի քիչ հետևել ինձ և տարա նրան իմ հոր գերեզմանի մոտ և պատմելով այդտեղ գեներալին այն պատվիրանը, որ արել էր ինձ հանգույալը, ես ձայնեցի դեպի գերեզմանը. «Հայր, սիրելի իմ հայր, կատարվել է քո մարգարեւությունը, քո ակնկալությունը արդարացավ—եկել է մեզ մոտ ոուսաց հովանավորությունը. ականջ դի՛ր, ահա նրա հաղթական զորքը փայլուն գեներալով, փողերի և ծնծղաների աղմուկի տակ անցնում է մեր բռնակարաններով, մոտենում է թշնամուն և խորտակում է նրա անսանձ հպարտությունը նրա դուների մոտ: Ականջ դի՛ր, հայր, լիիր քո որդիների բարօրությունը, լիիր, և յոդ հանգստանք քո աճյունը»: Արտասուրները չթողին որ շարունակեան խորս և առաքին ու զգայուն գեներալ Կրասովսկին, հոգված մինչև հոգու խորքը, հազիվ կարողացավ ինձ էլ, իրան էլ հեռացնել իր համար այնքան անակնկալ այդ տեսարանից»:

Եվ երբ այսպէս էր Ներսեսը իր սեփական խորքերով արած նկարագրության մեջ, մենք պետք է ընդունենք որ Խաչատուր Արքյանն էլ շատ հարազատ գուներով է նկարագրել այս մեծ պատմական դեպքը, որ տեղի ունեցավ 1827-ի հոկտեմբերի 1-ին: Այլ օրն ընկալ Երևանը, որ իր բարձրացման օրից թաթարական բռնակալության թանձրացումն էր ու ամուր պատվարը, որ իրեն թերդ նատած էր հայ երկրի սրտում այդ սիրտը իր հիուններով պատառութելու համար:

Դեպքը շատ մեծ հշանակություն ուներ և ոուսաց զենքի համար: Դա մի խոշոր հայրություն էր, որի համար գեներալ Պավլեվիչը մեծամեծ պարզների էր արժանանում և նրա անունը Արևելքի ժողովողի մեջ պատմական մեծ զորավարների փառքին հաղորդականից էր դառնում: Արևելքի մեջ մի մեծ ցնցուն էր տեղի ունենում, որ պիտի փոխեր ազգերի ճակատագիրը: Բայց անհունապէս մեծ էր Երևանի անկման հշանակությունը հայության համար:

(Լեռ, Պատմութիւն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 94, 97—100):